Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Նռնաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Նռնաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկի, դասվար 1-ին (17 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ), երգ-երաժշտության (3 դասաժամ), ֆիզիկայի (9 դասաժամ), հասարակագիտության(6 դասաժամ) ինֆորմատիկայի / ԹԳՀԳ-ի(5 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), կենսաբանության (8 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (22 դասաժամ), անգլերենի (18 դասաժամ), մաթեմատիկայի (25 դասաժամ) ,ֆիզկուլտուրայի(20 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 19-ից 30-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. սեպտեմբերի 3-ին, ժամը 13:00-ին, Սյունիքի մարզի Նռնաձորի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Նռնաձոր, 1-ին փողոց, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել +374 94 55 70 04 հեռախոսահամարով: